600.0044.06.08.03

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ՄԵՆԱՇՆՈՐՀՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 օգոստոսի 2003 թվականի N 44Ա
քաղ. Երևան

«ԵՐԵՎԱՆԻ ՋԵՐՄԱԷԼԵԿՏՐԱԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՔՎՈՂ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ՍԱԿԱԳՆԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողովը **որոշում է.**

1. Հետաձգել «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության) սակագնի վերանայման մասին» որոշման նախագծի քննարկումը:
2. Առաջարկել «Հայէներգո» փակ բաժնետիրական ընկերությանը՝ «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հետ համատեղ 20-օրյա ժամկետում քննարկել հունիս-սեպտեմբեր ամիսների պայմանագրային հզորությանն առնչվող հիմնախնդիրը և արդյունքի մասին տեղյակ պահել Հայաստանի Հանրապետության բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողովին:
3. Անդրադառնալ «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության) սակագնի վերանայման հարցին սույն որոշման 2-րդ կետում նշված հիմնախնդրի քննարկման արդյունքի մասին տեղեկատվություն ստանալուց հետո:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ՄԵՆԱՇՆՈՐՀՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱՋԱՐՅԱՆ

ք.Երևան
6 օգոստոսի 2003թ.
ժամը $15^{\underline{00}}$